

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԻԿՐԱԻՆԱՅԻ ՊԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Գ. 3. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայ և ուկրաինացի ժողովուրդների միջև կապերը դարավոր պատմություն ունեն։ Պատմական հանգամանքների բերումով հայ ժողովրդի մի հատվածը վաղ ժամանակներից հարկադրված թողել է իր հայրենիքը և հաստատվել մերձակա ու հեռավոր երկրներում, այդ թվում և Ուկրաինայում՝ վայելելով ուկրաինացի ժողովրդի բարյացակամ վերաբերմունքը։

Հայ-ուկրաինական կապերը նոր որակ ստացան, երբ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ։ Դրանք կայացան լուրջ դժվարությունների հաղթահարման ճանապարհով, որոնք պայմանավորված էին ինչպես պատմական բարդ ժամանակաշրջանով, այնպես էլ Ուկրաինայում և Հայաստանում նոր ու անկախ պետական կազմավորումների ստեղծմամբ։

1918 թվականի մայիսի 28-ին՝ ավելի քան 500-ամյա ընդմիջումից հետո, Հայաստանում վերականգնվեց պետականությունը։ Հայաստանի առաջին Հանրապետությունը հռչակվեց ներքին ու արտաքին չափազանց ծանր պայմաններում։ «Քչերն էին հավատում Հայաստանի նորահռչակ հանրապետության կենսունակությանը, քանզի խիստ նեղ էին նրա սահմանները և անբաժան ուղեկիցներն էին սովը, հիվանդությունները, քառսն ու անիշխանությունը։ Հայկական պետականության կերտման գործում ներքին ու արտաքին բարդ խընդիրների լուծման համար պահանջվում էին գերմարդկային ճիգեր։ Վիթխարի դժվարությունները հաղթահարելու ճանապարհին հայությունն ապրեց նոր մաքառումների, քաղաքական վայրիվերումների, հույսերի ու սպասելիքների և դառը հիասթափության մի բարդ ու հակասական շրջան»¹։ Չափազանց դժվար էր երկիրը դժոխային այդ ծանր կացությունից դուրս բերելը, բայց առավել ևս դժվար էր արտաքին հարաբերությունների կարգավորումը, պետությունների հետ կապերի հաստատումը։

Բաթումի պայմանագրով Հայաստանի արտաքին քաղաքական շփումները սահմանափակվում էին իր անմիջական հարևանների ու Քառչակ միության պետությունների հետ։ Թուրքիան Հայաստանի նորահռչակ հանրապետության համար գծել էր մի շրջան, որը պատռելու ու արտաքին աշխարհ դուրս գալու համար պահանջվում էր ժամանակ ու մեծ ջանքեր։

Ինչ վերաբերում է անմիջական հարևաններին, ապա, օգտվելով Հայաստանի ծանր կացությունից, Վրաստանն ու Ադրբեջանը ձգտում էին նրա հաշվին կատարել բռնազավթումներ, ինչն անխուսափելի էր դարձնում ռազմական ընդհարումները։

Թուրքական շրջափակումից դուրս գալու համար Հանրապետության ղեկավարությունը փորձում էր օգտվել այն հակասություններից, որոնք կային Թուրքիայի և նրա դաշնակիցների և առաջին հերթին Գերմանիայի միջև Անդրրկովկասի հարցերում։ Գերմանիան չէր ցանկանում Թուրքիայի չափից ավելի ուժեղացումն Անդրկովկասում և հակված էր պահպանելու Բրեստ-Լիտովսկի

¹ «Հայոց պատմություն. հիմնահարցեր», Եր., 2000, էջ 337-338:

պայմանները: Նկատի ունենալով դաշնակիցների միջև եղած այդ հակասությունը՝ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը ձգտում էր արժանազան Գերմանիայի բարյացակամ վերաբերմունքին: Այդ նպատակով Բաթումի բանակցություններում Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Օ. ֆոն Լոսովի հետ Գերմանիա մեկնեցին Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի ներկայացուցիչներ Համո Օհանջանյանն ու Արշակ Ջուրաբյանը: Մասամբ նրանց ջանքերի շնորհիվ էր, որ որոշվեց հունիսի 25-ին Կոստանդնուպոլսում հրավիրել Քառյակ միության պետությունների (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, Բուլղարիա) խորհրդածողով, որը պետք է լուծեր Թուրքիայի ու Անդրկովկասի պետությունների միջև առկա բոլոր խնդիրները²: Հունիսի 13-ին Կոստանդնուպոլիս մեկնեց Հայաստանի Հանրապետության խաղաղարար պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ: Խորհրդածողովը ժամանակին չկայացավ Քառյակի ռազմական անհաջողությունների պատճառով: Այն անընդհատ հետաձգվում էր: Շուրջ չորսուկես ամիս մնալով Գերմանիայում և Կոստանդնուպոլսում՝ հայկական պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի բարձրաստիճան գործիչների հետ: Նրանց հաջողվեց Հայաստանի նկատմամբ որոշ նպաստավոր վերաբերմունք ստեղծել: Շուտով մեկը մյուսի ետևից պարտություն կրեցին և պատերազմից դուրս եկան Քառյակ միության երկրները: Նոյեմբերին չեղյալ հայտարարվեցին Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերը: Հայաստանի Հանրապետության առջև բացվեցին արտաքին հարաբերությունները կարգավորելու նոր հեռանկարներ: Քանի որ ներկա դեպքում մեզ հետաքրքրում է հայ-ուկրաինական դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացը, ապա պետք է ասել, որ այն ըստ էության սկսվել է ավելի վաղ: Այդ տեսակետից որոշակի քայլեր կատարել էին Ուկրաինայում հաստատված հայկական ազգային մարմինները: Բացի այդ, Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի պատվիրակներ Արշակ Ջամալյանն ու Գևորգ Մելիք-Ղարազոզյանը Բեռլինից վերադարձի ճանապարհին հանդիպել էին Կիևի, Խարկովի, Թոստովի Հայոց ազգային խորհուրդների, ինչպես նաև Հայոց ազգային այլ կազմակերպությունների ու միությունների ներկայացուցիչների և հայ հասարակության լայն շրջանների հետ: Նրանք Կիևի հայկական կոմիսարիատի անդամների հետ կայացած համատեղ նիստում հանգամանորեն քննարկել էին Հայաստանի Հանրապետության հրոչակումից հետո ստեղծված նոր քաղաքական իրավիճակը ու Ուկրաինայում հայկական կոմիսարիատի հետագա գործունեության հարցը: Համատեղ մշակվեց և հունիսի 16-ին հաստատվեց հայկական կոմիսարիատի գործունեության հատուկ հրահանգը, որը բովանդակում էր նրա նոր կազմակերպչական կառուցվածքը և հիմնական խնդիրները: Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղարկած գրության մեջ Գ. Մելիք-Ղարազոզյանը նշում է. «...Հարկավոր են համարում հիշեցնել, որ ես և Ա. Ջամալյանը մեր վերադարձի ճանապարհորդության ժամանակ հարկավոր համարեցինք վերափոխել հայկական կոմիսարիատը ժամանակավոր կերպով (երկու ամսով, մինչև սեպտեմբերի մեկը) ներկայացուցչության Հայաստանի Հանրապետության... կազմեցինք սրանց համար մի նակագ... հարմարեցնելով նրան այնտեղի իրերի դրությամբ և ավելի հեղինակություն տալու համար մեր ներկայացուցիչներին: Այժմ թող կառավարությունը որոշի նրանց դրությունը, սկզբունքորեն որոշի, ցանկանում է արդյոք Ուկրաինայում քաղաքական ներկայացուցչություն ունենալ թե ոչ»³:

² Տե՛ս Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 94:

³ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 132, թ. 20:

⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, 1-ին մաս, թ. 46:

Հունիսի 16-ի հատուկ հրահանգի համաձայն՝ Կիևի հայկական կոմիսարիատը վերափոխվեց «Ուկրաինայի Կենտրոնական ռադայի կառավարությանը կից Հայաստանի կոմիսարիատի կոլեգիայի», որը պաշտոնապես ճանաչվեց Ուկրաինայի Կենտրոնական ռադայի կառավարության կողմից: Կոլեգիայի նախագահ հաստատվեց գնդապետ Միքայել Քրիստափորի Լոմիզեն, անդամներ՝ փոխգնդապետ Մակար Բոգդանի Պոպովը և կապիտան Աշոտ Նիկոլայի Տոնյանցը: Ինչպես տեսնում ենք, բոլորն էլ զինվորականներ էին, և դա բնական է, քանի որ Ուկրաինայում գործող հայկական համայնքի առավել ակտիվ, կազմակերպված ու բարձր քաղաքական գիտակցությամբ մարդիկ զինվորականներն էին:

Կոմիսարիատի կոլեգիան հարաբերությունների մեջ է մտնում Ուկրաինայի կառավարական, հասարակական և ազգային բոլոր հիմնարկների ու կազմակերպությունների հետ: Այն յուրատեսակ կապող օղակ էր Կենտրոնական ռադայի և Թիֆլիսի Հայոց ազգային (Կենտրոնական) խորհրդի միջև՝ դեկավարվելով վերջինիս հրահանգներով ու ցուցումներով: Իսկ 1918 թվականի սեպտեմբերի 15-ին Թիֆլիսի Հայոց ազգային (Կենտրոնական) խորհրդի գործունեության դադարեցումից հետո կոմիսարիատի կոլեգիան Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի միջոցով կապվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հետ և ստանում հրահանգներ ու ցուցումներ: Հուլիսի 22-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի հավատարմատար էր ճշաստակվել Արշակ Ջամայանը՝, որն էլ իրականացնում էր կապը Կիևի Հայկական կոմիսարիատի կոլեգիայի և Հայաստանի Հանրապետության միջև:

Իր նոր կարգավիճակին համապատասխան՝ որոշվեցին կոմիսարիատի կոլեգիայի խնդիրները. «ա) հարաբերություններն Ուկրաինայի կառավարության, ինչպես նաև Ուկրաինայում գտնվող դիվանագիտական և ազգային ներկայացուցիչների հետ, բ) հարաբերությունները բոլոր պետական, հասարակական և այլ հիմնարկությունների հետ, գ) տեղեկությունների հայտնումը պարբերական մամուլին ըստ կոմիսարիատի կոլեգիայի հայեցողության, ինչպես նաև հետևել մամուլում ընդհանուր քաղաքական և հատկապես հայ ժողովրդին առնչվող հարցերում, դ) ռուսական բանակի հայ ռազմագերիների, նախկին սպաների, բժիշկների, զինվորների և հայ քաղաքացիների հայրենիք տեղափոխելու խնդիրը և այլ պարտականությունները»⁶:

Առաջադրված խնդիրները հաջողությամբ իրագործելու նպատակով կոմիսարիատի կոլեգիայի կառուցվածքում ստեղծվեցին գաղթականական և սոցիալական օգնության, տեղեկատվության, ռազմագերիների, հրատարակչական, վիճակագրական, կուլտուր-լուսավորական և որ կարևոր է՝ Հայաստանի ու Ուկրաինայի միջև առևտրատնտեսական, ապրանքափոխանակման բաժնիճեր: Նման ենթակառուցվածքների ստեղծումն ինքնին վկայում է ստեղծված նոր պայմաններում կոմիսարիատի կոլեգիայի ծրագրած լայն գործունեության մասին:

Որպես ազգային մարմին՝ կոմիսարիատի կոլեգիան խորապես գիտակցում էր, որ ինքը հանդես է գալիս որպես նորաստեղծ հայկական պետության ներկայացուցիչ և այդ դիրքերից էլ կազմակերպում էր իր գործունեությունը: Կոմիսարիատի կոլեգիայի որոշմամբ նախագահ Միքայել Լոմիզեն ուղերձով դիմում է Ուկրաինայի Կենտրոնական ռադայի արտաքին գործերի նախարար Դմիտրի Դորոշենկոյին, որտեղ ասված էր. «Պարոն նախարար, թույլ տվեք ինձ որպես Ուկրաինայի կենտրոնական ռադայի կառավարությանը կից Հայաստանի կոմիսարիատի կոլեգիայի նախագահի, հանձնիս Ձեզ ողջունել անկախ

⁵ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 26, թ. 5:

⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, 1-ին մաս, թ. 70:

Ուկրաինայի գոյությունը... Անդրկովկասյան Սեյմի ցրումով Հայաստանը Վրաստանից և Ադրբեջանից հետո իրեն հռչակել է անկախ հանրապետություն և այժմ նրա հայացքն ուղղված է դեպի եղբայրական Ուկրաինան, որի հետ հայկյան ժողովուրդը դարերի տնտեսական ու մշակութային կապեր է ունեցել: Թույլ տվեք հավատալ, պարոն նախարար, որ Ձեր կողմից աջակցություն կգտնի միջազգային ծանր վիճակում գտնվող Հայաստանի ու հայ ժողովրդի կարիքների նկատմամբ⁷: Իր պատասխան ուղերձում Ուկրաինայի արտաքին գործերի նախարարը, շնորհավորելով Հայաստանի Հանրապետության հռչակումը, պատրաստակամություն հայտնեց «... ամենայն աջակցություն ցուցաբերել Հայաստանի կոմիսարիատի կոլեգիայի գործունեությանը և առհասարակ Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի նկատմամբ»⁸:

Հայաստանի Հանրապետության հռչակումը հատուկ ուղերձով ողջունեց Ուկրաինայի Կենտրոնական ուսուցիչ Անդրկովկասի ներկայացուցիչ Վլադիմիր Գիրչենկոն, որը հավաստիացնում էր, որ Ուկրաինան սիրով կպարենավորի Հայաստանը և կբացի բարձրագույն դպրոցների դռները հայ երիտասարդության առաջ: Այնուհետև Վ. Գիրչենկոն երկու հանրապետությունների միջև առևտրական հարաբերությունները ամրացնելու համար անհրաժեշտ էր համարում հիմնել ուկրաինա-հայկական առևտրական պալատ. «Մենք ցանկանում ենք, - նշում է Գիրչենկոն, - որ հայ հասարակությունը և ուկրաինական ժողովրդի լայն խավերը ապրեն այն գիտակցությամբ, թե Հայաստանը հենց իր շահերի տեսակետից պետք է աշխատի հարևան ուկրաինական ժողովրդի հետ եղբայրական համաձայնությամբ: Մենք հավատում ենք, որ մեր բարեկամական զգացմունքները արձագանք կգտնեն հայ ժողովրդի մեջ, որին մեր ամբողջ հոգով բարեմաղթում ենք բարգավաճում և երջանկություն»⁹:

Ուղերձների փոխանակումն ու ողջույնի խոսքերը գրեթե պաշտոնական դիվանագիտական մակարդակի էին, որոնք վկայում են հայկական և ուկրաինական հանրապետությունների միջև պետական հարաբերությունների ձևավորման ոչ սովորական գործընթացն սկսելու մասին:

Ինչպես տեսանք, Ուկրաինայում Հայկական կոմիսարիատի կոլեգիայի կարգավիճակի և գործունեության ոլորտների որոշման հարցը թողնված էր Հայաստանի կառավարությանը, որը անհասկանալի պատճառներով ձգձգում էր դրա լուծումը, իսկ այդ ընթացքում Հայաստանի կոմիսարիատի կոլեգիան շարունակում էր ակտիվորեն գործել: 1918 թվականի սեպտեմբերի 2-ին Թիֆլիսի Հայոց ազգային (Կենտրոնական) խորհրդին կոմիսարիատի ուղարկած զեկուցագրում նշվում է, որ իր գործունեության երկու ամսվա ընթացքում զգալիորեն կարգավորվել է կոլեգիայի ապարատի աշխատանքը, ամուր կապ է հաստատել Կենտրոնական ուսուցիչ բոլոր նախարարությունների հետ, «... թե Ուկրաինայի Կենտրոնական ուսուցիչ իշխանությունների և թե ուկրաինական ժողովրդի կողմից ամենայն ուշադրություն և պատրաստակամ վերաբերմունք է ցուցաբերվում կոմիսարիատի ներկայացուցիչների և առհասարակ հայ ժողովրդի նկատմամբ»¹⁰: Հայկական կոմիսարիատի կոլեգիայի լավագույն աշխատանքի մասին է վկայում նաև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանին Կենտրոնական ուսուցիչ ներկայացուցիչ Վ. Գիրչենկոյի հղած նամակը, որտեղ ասված է. «Կիևում ես կապի մեջ մտա Հայաստանի կոմիսարի հետ: Ձեր կոմիսարի գործունեությունը բարձր է ամեն ինչից... մեծ հեղինակություն է վայելում Ուկրաինայում»¹¹:

⁷ Նույն տեղում, թ. 24:

⁸ Նույն տեղում:

⁹ «Ջանգ», 28 օգոստոսի 1918 թ.:

¹⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, 1-ին մաս, թ. 23:

¹¹ Նույն տեղում, թ. 59:

Կոմիսարիատի կոլեգիային և նրա նախագահ Միքայել Լոմիզեին հաջող-
վել էր լուծել մի շարք կարևոր հարցեր, որոնցից ամենից կարևորը թերևս Առա-
ջին աշխարհամարտի տարիներին հատկապես Արևմտյան Հայաստանից և այլ
վայրերից Ուկրաինայում ապաստանած տասնյակ հազարավոր հայերի իրա-
վունքների ու քաղաքացիության հարցն էր: Այդ խնդրով Մ. Լոմիզեի առաջար-
կը Կենտրոնական ռադայի արտաքին գործերի նախարար Դորոշենկոյի կող-
մից հարգվեց, կայացվեց համաձայնություն, ըստ որի Ուկրաինայում ամբողջ
հայ բնակչության կյանքի բոլոր հարցերի տնօրինությունն անցնում էր կոմիսա-
րիատի կոլեգիային: Վերջինիս իրավունք էր տրվում վեցամսյա ժամկետով հայ
քաղաքացիներին հանձնել հատուկ վկայականներ, որոնք փոխարինելու էին օ-
րինական անձնագրին¹²: Դա ինչ-որ չափով թեթևացնում էր փախստական հա-
յության վիճակը, իրավական հիմք ստեղծում Ուկրաինայում նրա գոյության
համար: Հայ բնակչության իրական վիճակը ու նրա կենսական խնդիրները
պարզելու նպատակով կոմիսարիատի կոլեգիան ամրապնդեց կապը Կիևի, Օ-
դեսայի, Խարկովի, Նիկոլևսի և մյուս քաղաքների Հայոց ազգային խորհուրդ-
ների, զանազան ազգային մարմինների՝ միությունների, կազմակերպություն-
ների հետ, նրանց համախմբեց իր շուրջը: Միաժամանակ ազգային մարմիններ
ստեղծվեցին այն հայաբնակ քաղաքներում, որտեղ զգացվում էր դրանց ան-
հրաժեշտությունը: Այնուհետև կոմիսարիատի կոլեգիան որոշեց Կիևում գու-
մարել Ուկրաինայի և Մոլդավայի հայ համայնքների ներկայացուցիչների հա-
մագումար՝ քննարկելու համար Հայոց ազգային խորհուրդների գործունեու-
թյունը համակարգելու, միացյալ կազմակերպություններ և դրանց ղեկավար
կենտրոններ ստեղծելու հարցերը: Կոլեգիայի մշակած նախագիծը լայն արձա-
գանք գտավ հայաբնակ վայրերում: Չնայած 1918 թ. Ուկրաինայում ստեղծված
օբյեկտիվ դժվարությունների հետևանքով համագումարը չկայացավ, բայց կո-
միսարիատի կոլեգիան շարունակում էր իր ակտիվ գործունեությունը՝ հաղթա-
հարելով տնտեսական, քաղաքական, տեխնիկական և ֆինանսական մի շարք
դժվարություններ: Հարկ է նշել սակայն, որ կոմիսարիատի կոլեգիայի լիարժեք
գործելու համար ամենից խոչընդոտում էր այն հանգամանքը, որ չուներ դիվա-
նագիտական ներկայացուցչության կարգավիճակ ու լիազորություններ: Ավե-
լին՝ որպես կոմիսարիատ էլ լիազորությունները սահմանափակ էին, պահանջ-
վում էր ընդլայնել դրանք մինչև Ուկրաինայում դիվանագիտական միսիա ունե-
նալը: Ըստ այդմ, կոմիսարիատի կոլեգիայի հանձնարարությանը նախագահ
Մ. Լոմիզեն Թիֆլիսի Հայոց ազգային (Կենտրոնական) խորհրդին հիշեց երկու
զեկուցագիր (1918 թվականի սեպտեմբերի 1-ի № 1136 և սեպտեմբերի 2-ի №
1137), որոնցում ներկայացնելով կոմիսարիատի կոլեգիայի երկամսյա գործու-
նեությունը՝ պահանջում էր, որպես Ուկրաինայում անկախ Հայաստանի Հանրա-
պետության ներկայացուցչություն, իրեն տալ նոր լիազորություններ: Տարրի-
նակ է, որ կոմիսարիատի կոլեգիան գտնում էր, որ հավատարմագրված անձե-
րի, դեսպանների նշանակումն այս պահին կլինի ոչ ժամանակին, և որ դեռևս
կարելի է բավարարվել կոմիսարիատի՝ որպես հայ ժողովրդի շահերի պաշտ-
պանի գործունեությամբ¹³: Սովորաբար վկայակոչվում էր հանրապետության
հետ անմիջական կապի ու ճանապարհների բացակայությունը, գլխավորապես
տեխնիկական խոչընդոտները: Անշուշտ դրանք կային, և դիվանագիտական
միսիա ունենալու համար պետք է ստեղծեին գործունեության անհրաժեշտ
պայմաններ: Այդուհանդերձ նման իրավիճակում էլ կարելի էր Ուկրաինայում
ունենալ Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչ: Այ-
լապես, ինչպես երևում է կոլեգիայի վերոհիշյալ զեկուցագրերից, կոմիսարիա-
տի կոլեգիան ինչքան էլ մեծ լիազորություններ ունենար, դեռևս չէր ցուցադրում

¹² Տե՛ս նույն տեղը, թ. 24:

¹³ Տե՛ս նույն տեղը, թ. 23-24:

և ընդգծում Հայաստանի Հանրապետության սուվերենությունը (ինքնիշխանությունը) որպես անկախ ու ինքնուրույն պետություն: Կոմիսարիատի կոլեգիայի զեկուցագիրը ուղարկվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որը 1918 թվականի հոկտեմբերի 8-ին միտում քննարկեց Ուկրաինայի Կենտրոնական ռադայի կառավարությանը կից Հայաստանի կոմիսարիատի կոլեգիային լիազորություններ տալու հարցը և առանց խորամուխ լինելու խնդրի կարևորության մեջ որոշեց. «Ի նկատի ունենալով այն, որ հաղորդակցությունը Կիևի և Երևանի միջև խիստ դժվար է, արդի պայմաններում Ուկրաինայի կառավարության կից ունենալ Հայաստանի ներկայացուցչություն անհարմար է: Առաջարկել Կիևի կոմիսարիատին պահպանել իր գոյությունը իբրև ազգային ներկայացուցչություն տեղական հայերի կարիքները բավարարելու համար, այլ ոչ իբրև Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիա, որը կոչված լինի դնել և լուծել քաղաքական բնույթ կրող հարցեր:

Խնդրել կոմիսարիատին շարունակել Ուկրաինայում շաքար և ցորեն գնելու իրավունք ստանալու նախապատրաստական աշխատանքները:

Այս գործը հնարավորելու համար հանձնարարել Ներքին գործերի նախարարին, ֆինանսների նախարարի հետ մեկտեղ ուղարկել Կիև մի հատուկ մարդ անհրաժեշտ լիազորություններով օժտված»¹⁴:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, փոխանակ ընդլայնելու Կիևի Հայկական կոմիսարիատի կոլեգիայի լիազորությունները, կրճատեց դրանք՝ այն դիտելով սուկ տեղական հայերի կարիքները բավարարող ազգային ներկայացուցչություն: Մինչդեռ, ինչպես նշեցինք վերևում, արդեն որոշակի քայլեր էին կատարվել կոմիսարիատի կոլեգիան Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության վերածելու ուղղությամբ: Կառավարությունն ինքն էլ գիտակցում էր, որ դրսում որևէ հարց լուծելու համար Հայաստանն անպայման պետք է ունենա հատուկ լիազորություններով օժտված մարմին: Ըստ այդմ, նա Կիևի Հայկական կոմիսարիատի կոլեգիային խնդրում է նախապատրաստական աշխատանքներ տանել Ուկրաինայում շաքար և ցորեն գնելու իրավունք ստանալու համար, այն դեպքում, երբ կոմիսարիատի կոլեգիան, փաստորեն, նման լիազորություններ չուներ: Դրա համար էլ որոշվում է Կիև ուղարկել անհրաժեշտ լիազորություններով օժտված մեկին:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, փաստորեն, կասեցնում էր Ուկրաինայում պաշտոնական դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու արդեն սկսված գործընթացը: Այն կրկին թողնվեց տեղական, մասնավոր անձանց գործունեության մակարդակի վրա: Այնուամենայնիվ հենց մասնավոր անձանց նախաձեռնությամբ էլ սալլը տեղից շարժվեց՝ արձանագրելով որոշակի առաջընթաց: Այս տեսակետից մեծ է Գրիգոր Սերգոյի Ջամոյանի մատուցած ծառայությունը: 1918 թ. հուլիսի կեսերին Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի հատուկ հանձնարարականով նա մեկնելու էր Մոսկվա՝ Աստրախանում հավաքված 30 հազար հայ գաղթականներին Հայաստան փոխադրելու համար Խորհրդային կառավարության հետ բանակցելու առաքելությամբ: Օբյեկտիվ պատճառով Գ. Ջամոյանը չկարողացավ կատարել այդ հանձնարարությունը, բայց ճանապարհին մնաց Կիևում և զբաղվեց կոմիսարիատի կոլեգիայի գործերով: Բանն այն է, որ Գ. Ջամոյանը Կիևում հանդիպեց Խորհրդային Ռուսաստանի խաղաղարար պատվիրակության ղեկավար Ռակոպսկուն և նրանից Մոսկվա մեկնելու թույլտվություն խնդրեց՝ իրեն հանձնարարված գործը կատարելու համար: Ռակոպսկին թեև Գ. Ջամոյանին ընդունեց շատ սիրալիք, բայց խորհուրդ չտվեց մեկնել Մոսկվա՝ պատճառաբանելով, որ Բաքվի 26 կոմիսարների ձերբակալման և խորհրդային գործերի զինաթափման գործողությունների հետևանքով Խորհրդային կառավարությունը փոխել է իր վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ռակոպսկին միաժամանակ

¹⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, ց. 1, գ. 2, թ. 60:

խոստանում է հարցում անել Կենտրոն, բայց Մոսկվայից պատասխանի ուշացման պատճառով Գ. Ջամոյանը որոշում է մնալ Կիևում և զբաղվել կոմիսարիատի կոլեգիայի խնդիրներով: Նա նամակով դիմում է Մոսկվայում գտնվող Հակոբ Զավրիևին, որպեսզի վերջինս գա Կիև, և միասին քննարկեն կոմիսարիատի կոլեգիայի հետագա գործունեության հետ կապված հարցերը¹⁵:

Գ. Ջամոյանը կոմիսարիատի կոլեգիայի գործունեությանը մեծապես աջակցեց հատկապես Հայաստանին պարեն, շաքար ու ցորեն ուղարկելու գործում: Բայց այդ ընթացքում նա խորապես համոզվեց, որ Ուկրաինայի Կենտրոնական ոստայի կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիվանագիտական ներկայացուցչության բացակայությունը մեծապես խոչընդոտում է առաջադրված խնդրի լուծմանը: Ըստ այդմ, 1918 թվականի սեպտեմբերի կեսին նա մեկնում է Բեռլին՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Համո Օհանջանյանի և մյուս անդամների հետ խորհրդակցելու: Կիևում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ ունենալու մասին ստանալով Հ. Օհանջանյանի համաձայնությունը՝ Գ. Ջամոյանը վերադառնում է Կիև և հոկտեմբերի 12-ին հեռագրում վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի հավատարմատար Արշակ Ջամալյանին՝ տեղեկացնելով, որ «Համո Օհանջանյանը առաջարկել է ղեկավարել ներկայացուցչությունը Ուկրաինայում, մինչև կառավարության կարգադրությունը, որի մասին հաղորդել է Խատիսովին»¹⁶: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 13-ին, Գ. Ջամոյանը կոմիսարիատի կոլեգիայի անդամ Աշոտ Տոնյանցի միջոցով Ա. Ջամալյանին ուղարկում է մի զեկուցագիր, որտեղ ներկայացնում է Ուկրաինայի քաղաքական կացությունը, կոմիսարիատի կոլեգիայի գործունեությունը և այն դիվանագիտական ներկայացուցչության վերածելու ուղղությամբ իր ձեռնարկած առաջին քայլերը: Մինչ այդ՝ հոկտեմբերի 1-ին, Հ. Օհանջանյանը Բեռլինից նամակ է հղում Կոստանդնուպոլսում գտնվող Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար, արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանին՝ տեղեկացնելով, որ «Կիևում մենք չունենք պաշտոնական ներկայացուցչություն, որը շատ կարևոր է, որովհետև Կիևը հիմա դառել է կենտրոն ամբողջ Ռուսաստանի բոլոր հոսանքների... Դեպի մեզ վերաբերումը Ուկրաինայի կառավարության կողմից և հասարակության կողմից՝ շատ լավ է: Հարկավոր է ունենալ այնտեղ ներկայացուցիչ, որ կարող է շատ բան անել: Ես խնդրեցի Գ. Ջամոյանին, որ միտոժամանակ մնա այնտեղ, մինչև որ արտաքին գործոց նախարարը նշանակե պաշտոնապես կամ իրեն՝ Գ. Ջամոյանին կամ ուրիշին: Խնդրում եմ ուղարկել ինձ նրա համար մի պաշտոնական գրություն, որով նա կարողանա ներկայանալ իբրև մեր կառավարության ներկայացուցիչ»¹⁷:

1918թ. հոկտեմբերի 15-ին Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը իր № 32-րդ նիստում քննարկեց Համո Օհանջանյանի ստորագրությամբ հոկտեմբերի 1-ի նամակը և որոշեց «... ուղարկել մի գրություն Գ. Ջամոյանի անվամբ, նշանակելով նրան ներկայացուցիչ Ուկրաինայի համար»¹⁸, իսկ նոյեմբերի սկզբին Կոստանդնուպոլսից Ալեքսանդր Խատիսյանը Գ. Ջամոյանի անվամբ հավատարմագիր ուղարկեց Կիև:

«Ուկրաինայի արտաքին գործերի նախարարին Ձերդ գերազանցություն»

Պատիվ ունեն Ձեզ տեղեկացնելու, որ իրավաբանության դոկտոր պարոն Գրիգոր Ջամոնը Հայաստանի Հանրապետության հավատարմատարն է Ուկ-

¹⁵ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, 1-ին մաս, թ. 37:

¹⁶ Նույն տեղում, թ. 63:

¹⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 72:

¹⁸ Նույն տեղը, գ. 12, թ. 100:

րահնայի կառավարությունում՝ լիազորված լինելով զբաղվել Հայաստանին առնչվող բոլոր խնդիրներով:

Ընդունեք խնդրեմ,

Ձերդ գերազանցություն

Լավագույն հարգանքների հավաստիքը

Կոստանդինոպոլիս 1918թ. հոկտեմբերի 22

Հայաստանի Հանրապետության

*Արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյան*¹⁰:

Նոյեմբերի 19-ին Գ. Ջամոյանն իր հավատարմագիրը հանձնեց Ուկրաինայի նոր նշանակված արտաքին գործերի նախարար Գ. Աֆանասևին: Այդ պահից Կիևում Հայկական կոմիսարիատի կողմից դադարեց գործելուց՝ վերակառուցվելով Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության²⁰:

Ուկրաինայի իշխանությունները ջերմորեն ընդունեցին Կիևում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչի նշանակումը, որի մասին Գ. Ջամոյանը տեղեկացրել է. «Հետմանի ժամանակվա միևնույն կողմից խորհուրդը միշտ խանդավառ կերպով է վերաբերվում դեպի Հայաստանը: Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը ընդունվեց դիվանագիտական կորպուսի մեջ իբրև հավասարազոր անդամ և ոչ ոք այդ դիվանագիտական խորհրդի անդամներից կասկած չհայտնեց: Մեր կառավարության ներկայացուցչին ընդունում են այնպես, ինչպես Շվեյցարիայի, Իտալիայի, Բուլղարիայի և այլ նման պետությունների ներկայացուցիչներին»²¹: Դա ինքին վկայում էր Հայաստանի նորաստեղծ պետության միջազգային ճանաչման մասին, քանզի նա դառնում էր համաշխարհային հանրության անդամ, որպես ինքնուրույն, սուվերեն հանրապետություն՝ իր միջազգային կապերով, որը, անշուշտ, պատմական կարևոր իրողություն էր երկու երկրների քաղաքական հարաբերությունների պատմության մեջ:

Բնականաբար, Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը իր կազմակերպման առաջին օրվանից որոշեց իր կազմը, կառուցվածքն ու խնդիրները: Ներկայացուցչության կազմի մեջ մտնում էին՝

1. Դիվանագիտական ներկայացուցիչ՝ Գ. Ջամոյան,
2. Խորհրդական առևտրատնտեսական գծով՝ Մ. Լոմիզե,
3. Քարտուղար՝ Օ. Խազիզյան,
4. Ջինվորական կցորդ՝ Ա. Տոնյանց,

Սպասարկող անձնակազմ՝ թարգմանիչ, մեքենագործի, սուրհանդակ, զանձապահ:

Իբրև հաջորդ քայլ՝ ճյուղատոսական հիմնարկներ բացվեցին Կիևում, Օդեսայում, Խարկովում:

Առանց հստակեղևու դիվանագիտական ներկայացուցչությունը ձեռնամուխ եղավ իր առաջնահերթ խնդիրների իրագործմանը՝ Ուկրաինայում հայ քաղաքացիների, գաղթականների, ռազմագերիների իրավունքների ու շահերի պաշտպանություն, Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև բարեկամական, քաղաքական, առևտրատնտեսական հարաբերությունների հաստատում և զարգացում: Հարկ է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը ստիպված էր գործելու Ուկրաինայի ներքին և արտաքին բավական լարված ու ծանր կացության պայմաններում, իսկ դա, ինչ խոսք, բացասաբար էր անդրադառնում նրա աշխատանքի վրա:

¹⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, 1-ին մաս, թ. 78:

²⁰ Տե՛ս «Кавказское дело», 11 декабря 1918:

²¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, 1-ին մաս, թ. 117:

Այդ տեսակետից վիճակն ավելի վատթարացավ նույնքեր-դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների հետևանքով. գրկվելով գերմանական զորքերի աջակցությունից՝ հետման Սկորոպադսկին կորցրեց իշխանությունը Ուկրաինայում: 1918 թվականի դեկտեմբերի 14-ին Կիևում իշխանությունը վերցրեց Դիրեկտորիան, և Ուկրաինան հռչակվեց ժողովրդական հանրապետություն: Ամբողջ իշխանությունը կենտրոնացվեց հինգ հոգուց բաղկացած Դիրեկտորիայի ձեռքում՝ Վիննիչենկոյի նախագահությամբ: Սակայն դրանից հետո էլ երկրում քաղաքական կայունություն չստեղծվեց: 1919 թ. Ուկրաինան հայտնվեց այնպիսի քառասյուն իրավիճակի մեջ, որ պիսին չի տեսել եվրոպական և ոչ մի երկիր: Բավական է ասել, որ նրա տարածքում միաժամանակ գործում էին թշնամական վեց բանակ՝ ուկրաինական, բոլշևիկյան, Սպիտակ, Անտանտի, լեհեր ու անարխիստներ: Մեկ տարուց պակաս ժամանակահատվածում Կիևը հինգ անգամ ձեռքից ձեռք անցավ: Քաղաքներն ու ամբողջ շրջանները կտրված էին իրարից բազմաթիվ ռազմաճակատներով: Կապն արտաքին աշխարհի հետ գրեթե ամբողջովին կտրված էր²²: Կային քաղաքներ, որոնք բաժանված էին մասերի, և ամեն մի մասում տիրում էր մի անկախ իշխանություն: Օրինակ՝ Եկատերինոսլավում երկաթուղու կայարանն ու երկաթգիծը գտնվում էին գերմանացիների, քաղաքի կենտրոնը՝ հետմանի, միջին տարածությունը՝ գեներալ Ա. Դենիկինի, իսկ մնացած մասը՝ բոլշևիկների ձեռքում:

Հասկանալի է, որ նման իրավիճակում Ուկրաինայի նոր իշխանությունը՝ Դիրեկտորիան, չէր կարող իր հսկողությունն իրականացնել ամբողջ երկրի նկատմամբ և վարել ներքին և արտաքին ճիշտ ու արդյունավետ քաղաքականություն:

Ահա այդպիսի պայմաններում էր գործում Կիևում նորաստեղծ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը, որի նկատմամբ ուկրաինական նոր իշխանությունը նույնպես դրսևորեց բարյացակամ վերաբերմունք: Այդ մասին Գ. Ջամոյանը Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին ներկայացրած 1919 թ. հունվարի 23-ի զեկուցագրում տեղեկացնում է. «Միմիստրական պարապմունքներն սկսելուն պես՝ ես այցելեցի արտաքին գործերի նախարար Վլադիմիր Չեխովսկուն, որն ինձ ընդունելով սիրալիք կերպով և ուշադիր վերաբերմունք ցույց տալով, խնդրեց իր ողջույնը հայտնել ազատասեր հայ ժողովրդին, ավելացնելով, որ նոր իշխանությունը անպայման ընդունում է Հայաստանի Հանրապետության անկախությունը և ցանկալի է համարում սերտ կապ հաստատել երկու հանրապետությունների միջև»²³: Նույն թվականի փետրվարի 8-ին Արտաքին գործերի նախարար Վ. Չեխովսկին Հայաստանի Հանրապետությունում իր երկրի արտակարգ դիվանագիտական միսիայի ղեկավար Նշանակեց Ժան Կրասկովսկուն:

Ինքնին հասկանալի է, որ յուրաքանչյուր դիվանագիտական ներկայացուցչության արդյունավետ գործունեության կարևորագույն պայմաններից մեկը իր երկրի հետ ունեցած կապի և հաղորդակցության միջոցների անխափան աշխատանքն է: Սակայն Նշված ժամանակահատվածում Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության և Հայաստանի կառավարության միջև այդ կապը շատ թույլ էր, որը խիստ բացասաբար էր անդրադառնում նրա գործունեության վրա: Եվ բնավ պատահական չէ, որ հունվարի 23-ի իր զեկուցագրում Գ. Ջամոյանը դժգոհությամբ հայտնում էր, որ. «... չորրորդ զեկուցումն է գրում առանց ստանալու կառավարությունից ղեկավարող ցուցումներ»²⁴: Ահա թե ինչու իր բոլոր զեկուցագրերում նա խնդրում է իրեն ազատել նման ծանր պարտականությունից:

²² Տե՛ս «Орест Субителный. Украина История», Киев, 1994, էջ 455-456:

²³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, 1-ին մաս, թ. 117:

²⁴ Նույն տեղում, թ. 119:

Ոչինչ չկա զարմանալի. Գ. Ջամոյանի պես եռանդուն գործիչ նյարդերը նույնպես տեղի էին տալիս: Բանն այն է, որ դժվարությունները ոչ միայն օրյեկտիվ էին, այլև սուբյեկտիվ: Ընդ որում, դրանք բխում էին ոչ միայն Ուկրաինայի իրավիճակից, այլև Հայաստանի: Օրինակ, ներկայացուցչության ստեղծումից անցել էր վեց ամիս, բայց դեռ չկար այդ մասին նախարարների խորհրդի որոշումը: Իսկ ամենից ծանրը, իհարկե, ներկայացուցչության ֆինանսական կացությունն էր: Ծիշտ է, կառավարությունը վաղօրոք նախատեսել էր հատկացնել չնչին մի գումար՝ ամսեկան 15 հազար ռուբլի, բայց դա էլ չէր հաստատվել ու չէր ուղարկվում: Այդ տեսակետից խիստ հատկանշական էր, որ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Գ. Ջամոյանը իր գրություններից մեկում դժվարությամբ ստեղծածը կորցնողի ցավով ու ափսոսանքով խնդրում էր կառավարությանը «առանց հաշվի առնելու Ուկրաինայում քաղաքական փոփոխությունները պահել արդեն կարգի դրած ապարտը և աջակցել նրանց և նյութապես և բարոյապես»²⁵: Որպես փրկության վերջին հույս՝ Գ. Ջամոյանը մի հանգամանալից զեկուցագիր կազմեց դիվանագիտական ներկայացուցչության և Օդեսայի գլխավոր հյուպատոսական հիմնարկի կազմի ու խնդիրների մասին և ուղարկեց Հայաստանի կառավարության հաստատմանը:

Չեկուցագիրը դիվանագիտական ներկայացուցչության զինվորական կցորդ Ա. Տոնյանցը մարտի 20-ին հանձնել է արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանին, որը նույն օրը ներկայացնում է նախարարների խորհրդի միտի քննարկմանը: Հարցը լսելուց հետո որոշվում է՝ «հանձնարարել Արտաքին գործերի նախարարին՝ նախահաշիվ և օրինագիծ ներկայացնել Նախարարների խորհրդին»²⁶: Դրանից հետո անցավ ավելի քան երկու ամիս, և, ի վերջո, նույն թվականի մայիսի 24-ին Նախարարների խորհուրդը հաստատեց Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի կազմը²⁷:

Ցավոք այդ որոշումն արդեն ուշացած ու ժամանակավրեպ էր, որովհետև մինչ այդ Ուկրաինայում տեղի ունեցած քաղաքական կտրուկ փոփոխության հետևանքով շուրջ մեկ ամիս առաջ՝ ապրիլի վերջերին, Ուկրաինայից հեռացել էր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիան: Իսկ թե ի՞նչն էր դրա հիմնական պատճառը, սպառնիչ պատասխանը կարդում ենք 1919 թ. ապրիլի 30-ին Հայաստանի Հանրապետության արտգործնախարարին Գ. Ջամոյանի ուղղած զեկուցագրում. «Ես անձամբ ինձ համար հնարավոր չհամարեցի մնալու Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչը Խորհրդային իշխանության մոտ, առանց այդ մասին իմ կառավարությունից պաշտոնական լիազորություն ունենալու: Իմ կարծիքով Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ մնալը խորհրդային իշխանության մոտ այն ժամանակ, երբ Անտանտան Հայաստանը նկատում է իբրև դաշնակից և կովող կողմ աննպատակահարմար կլինե՞ր և կհակասե՞ր Հայաստանի արտաքին քաղաքականության ոգուն: Ահա այս նկատառումներից էլնելով ես հարկադրված ժամանակին հեռացա Օդեսայից և եկել եմ Ձեզ պարոն նախարար զեկուցում տալու և Ձեզանից հրահանգներ ու ցուցումներ ստանալու»²⁸: 1919 թվականի հունիսի սկզբին Գ. Ջամոյանը Հայաստանի կառավարությանը հաշվետվություն ներկայացրեց Ուկրաինայում հայկական դիվանագիտական միսիայի կատարած աշխատանքների մասին: Բարձր գնահատելով Ուկրաինայում կատարած աշխատանքը՝ Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը

²⁵ Նույն տեղում:

²⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 48:

²⁷ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 48, թ. 18:

²⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, 1-ին մաս, թ. 128:

1919 թվականի հունիսի 30-ին որոշեց Գրիգոր Սերգոյի Ջամոյանին նշանակել Սիրիի (ծովակալ Կոլչակի) կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ²⁹:

Г. А. ПЕТРОСЯН - *Из истории дипломатических отношений Первой Армянской Республики и Украины.*- Статья посвящена совершенно неизученной доселе области армянской истории: дипломатическим отношениям Первой Армянской Республики с Украиной. Автором рассматриваются трудности на пути создания дипломатического представительства Армянской Республики в Украине, отмечаются доброжелательное отношение украинских властей к действующим в Украине армянским национальным организациям, а также помощь и поддержка, оказываемая им.

²⁹ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 148: